ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 4-ՐԴ ՓՈՂՈՑՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շահումյան 4-րդ փողոցը՝ նրբանցքներով, անվանափոխել հայ արվեստագետ և գեղանկարիչ Կարեն Սմբատյանի անվամբ՝ «Կարեն Սմբատյան փողոց» (սկսվում է Սեբաստիայի փողոցից, հասնում՝ Առնո Բաբաջանյան փողոց), «Կարեն Սմբատյան փողոց, 1-ին նրբանցք» (սկսվում է հ.33 և հ.35 շենքերի մոտից, հասնում՝ Եռաբլրի ստորոտ), «Կարեն Սմբատյան փողոց, 2-րդ նրբանցք» (սկսվում է հ.57 և հ.01-007-0436-0033 կադաստրային ծածկագրով գույքերից, հասնում՝ Եռաբլրի ստորոտ), «Կարեն Սմբատյան փողոց, 3-րդ նրբանցք» (զուգահեռ է 2-րդ նրբանցքին):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 4-ՐԴ ՓՈՂՈՑՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ գեղանկարիչ Կարեն Վահանի Սմբատյանը ծնվել է 1932 թվականի ապրիլի 21-ին, Լենինականում (այժմ՝ Գյումրի):

Մասնագիտական կրթությունը ստացել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում: Ուսումնառության ընթացքում ձևավորվել է նրա ստեղծագործական աշխարհայացքը, որը հիմնված էր հայկական դասական կերպարվեստի, միջնադարյան մանրանկարչության և եվրոպական գեղանկարչության լավագույն ավանդույթների վրա:

1952-1956 թվականներին ծառայել է խորհրդային ռազմածովային ուժերում՝ շարունակելով զբաղվել ստեղծագործական աշխատանքով, իսկ ծառայությունից հետո ամբողջությամբ նվիրվել է գեղանկարչությանը:

Կարեն Սմբատյանը համարվում է ժամանակակից հայկական կերպարվեստի ինքնատիպ ներկայացուցիչներից մեկը: Իր ստեղծագործություններում նա հանդես է եկել որպես դիմանկարի, բնանկարի, նատյուրմորտի, թեմատիկ և խորհրդանշական կոմպոզիցիաների հեղինակ: Նրա գեղարվեստական մտածողությունն առանձնանում էր գունային համարձակ լուծումներով, պարզեցված ձևերով և ազգային խորհրդանիշների ինքնատիպ մեկնաբանությամբ, ինչի համար արվեստասերները նրան անվանել են «Գույների ասպետ»:

1966-1980 թվականներին աշխատել է «Պիոներ» և «Ծիծեռնակ» մանկական պարբերականների գեղարվեստական խմբագիր: Այդ տարիներին նկարազարդել է հայ և համաշխարհային գրականության բազմաթիվ ստեղծագործություններ, այդ թվում՝ Հովհաննես Թումանյանի, Ղազարոս Աղայանի, Ջաննի Ռոդարիի ստեղծագործությունները, ինչպես նաև հայկական և արաբական ժողովրդական հեքիաթների ժողովածուներ:

Նրա ստեղծագործական ժառանգության մեջ առանձնանում են «Ինքնանկար» (1972), «Զորախաղ» (1977-1978), «Զարթնիր, լաո» (1982), «Աղբյուր Սերոբ» (1985), «Տեղատվություն» (1996), «Գագիկ Գինոսյանի դիմանկարը» (2004), «Գեղեցկուհի Ասպազիա» (2005), «Աշնան արև» (2005) և «Միջօրե» (2005) կտավները, որոնք վկայում են հեղինակի ստեղծագործական բազմազանության, ազգային մտածողության և գեղարվեստական բարձր վարպետության մասին:

Կարեն Սմբատյանի ստեղծագործությունները ցուցադրվել են բազմաթիվ անհատական և խմբակային ցուցահանդեսներում Հայաստանում և արտերկրում՝ Ֆրանսիայում, Իտալիայում, Լեհաստանում, Գերմանիայում, Լիբանանում, ԱՄՆ-ում և այլ

երկրներում: Նրա աշխատանքները պահպանվում են Հայաստանի ազգային պատկերասրահում, Երևանի գրականության և արվեստի թանգարանում, ինչպես նաև աշխարհի մի շարք հեղինակավոր թանգարաններում, պատկերասրահներում և մասնավոր հավաքածուներում:

Ստեղծագործական հարուստ գործունեության ընթացքում արժանացել է բազմաթիվ պատվոգրերի և պարգևների: 2007 թվականին պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ոսկե մեդալով՝ հայ կերպարվեստի զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար:

Կարեն Սմբատյանը մահացել է 2008 թվականի դեկտեմբերի 27-ին, Երևանում:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շահումյան 4-րդ փողոցը՝ նրբանցքներով հայ գեղանկարիչ Կարեն Սմբատյանի անվամբ անվանափոխելու միջնորդությունը ներկայացվել է քաղաքացի Միեր Սմբատյանի կողմից:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 16-րդ կետն առաջարկվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շահումյան 4-րդ փողոցը՝ նրբանցքներով անվանափոխել հայ գեղանկարիչ Կարեն Սմբատյանի անվամբ՝ «Կարեն Սմբատյան փողոց», «Կարեն Սմբատյան փողոց, 1-ին նրբանցք», «Կարեն Սմբատյան փողոց, 2-րդ նրբանցք», «Կարեն Սմբատյան փողոց, 3-րդ նրբանցք»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ